ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2014թ. **N ____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 954-967-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու և Ընկերությունում: ներդրումներ կատարելու առաջարկին:

2.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ հավատարմագրային կառավարիչ) հավատարմագրային կառավարմանը՝ 5 տարի ժամկետով:

2) Երևանի անունից կնքել Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը (այսուհետ նաև՝ պայմանագիր), հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, պայմանագրում ներառելով նաև հետևյալ դրույթները.

ա. հավատարմագրային կառավարչի կողմից ներդրումներ կատարելու պարտավորությունը, այդ թվում՝ ներդրման գումարի չափը, ժամկետները, ներդրումներ

կատարելու եղանակը և այլ անհրաժեշտ պայմաններ՝ ներդրումներ կատարելու պարտավորությունն ապահովելու, ինչպես նաև անհրաժեշտ հսկողություն իրականացնելու համար.

բ. առանց հավատարմագրային կառավարման հիմնադրի գրավոր համաձայնության չօտարել, գրավ չդնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը:

3. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանել, որ հավատարմագրային կառավարիչն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները, այն է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

գ. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

դ. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ե. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

զ. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

է. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ը. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

թ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժ. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

4. Սահմանել, որ պայմանագրով հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած երկարաժամկետ (10 տարի) ներդրումային պարտավորությունների իրականացման 5-րդ տարում դրանք տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված չափով և ժամկետում լիովին ու պատշաճ կատարելու պարագայում, Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է երկարացված նույն ժամկետով և պայմաններով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2012թ. փետրվարի 14-ի Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու «Գրիգոր Նարեկացի ԲԿ» ՓԲԸ վերակազմակերպելու մասին թիվ 399-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է նրանից նոր՝ «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության», «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության, «Նուբարաշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության առանձնացման ճանապարհով: Ներկայումս «Գրիգոր Նարեկացի ԲԿ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի, այդ թվում հողամասի մակերեսը՝ 1,066 հա է, որից շենքեր, շինություններ՝ 4889.7 մ^2:

«Գրիգոր Նարեկացի ԲԿ» ՓԲԸ-ում մատուցվում են հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ, ինչպես վճարովի, այնպես էլ անվճար հիմունքներով: Բուժհաստատությունում մատուցվում են արտահիվանդանոցային գրեթե բոլոր ծառայությունները, իսկ հիվանդանոցային բուժօգնությունը սահմանափակվում է հիմնականում մանկաբարձական և գինեկոլոգիական ծառայություններով: Բուժհաստատության սարքավորումների մեծ մասը արտադրվել են դեռևս խորհրդային տարիներին, որոնք հնարավորություն չեն ընձեռում մատուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բուժօգնություն: Հիմք ընդունելով բուժհաստատության տեխնիկական հագեցվածության աստիճանը՝ ՀՀ առողջապահության նախարարի 28.12.2012թ N 3143-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման» չափորոշիչով «Գրիգոր Նարեկացին» ԲԿ ՓԲԸ-ն դասակարգվել է որպես II մակարդակի բուժհաստատություն: Այսինքն բուժհաստատությունում կարող են մատուցվել են

մասնագիտական մանկաբարձագինեկոլոգիական օգնություն նորմալ, միջին և բարձր ռիսկի խմբերի հղիներին, որոնց նորածինները չեն պահանջում հատուկ, նեղ մասնագիտացված հետազոտում ու բուժում: Պայմանավորված նշված հանգամանքներով՝ հղիների մեծ մասը գերադասում է ծննդալուծվել այն բուժհաստատություններում, որտեղ մատուցվում են նեղ մասնագիտացված մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ, հատկապես այն դեպքում, երբ վարչական շրջանի տարածքում գործում է III մակարդակի բուժհաստատություն:

Այսինքն ազգաբնակչության առավել վճարունակ հատվածը գերադասում է նմանատիպ նեղ մասնագիտացված բուժհաստատություններում մատուցվող բարձրորակ ծառայությունները:

Այսպես «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում սպասարկված մանկաբարձական դեպքերի թվաքանակը 2010 թվականին կազմել է 959, 2011 թվականին՝ 895, 2012 թվականին՝ 844, իսկ 2013 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին՝ 664: 2013 թվականի տարեկան կանխատեսվող ծավալը շուրջ 800 ծնունդ: Այսինքն 2010 թվականի համեմատ ծնունդների թվաքանակը նվազել է շուրջ 17%-ով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում Երևան քաղաքում սպասարկված դեպքերի թվաքանակը աճել է շուրջ 6%-ով: Ծնունդների թվաքանակով պայմանավորված՝ 2013 թվականի մարտ ամսից հետո բուժհաստատությունում հնարավոր չի լինում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 04.02.2013թ N 202-Ա հրամանով սահմանված բուժաշխատողների բոնուսային ֆինանսավորումը: Նշված միտումների պահպանման դեպքում հնարավոր չի լինելու ապահովել նաև բուժաշխատողների հաստատագրված աշխատավարձի վճարումը:

Վերջին տարիների, չնայած բուժհաստատության ֆինանսական գործունեության արդյունքում շահույթի փոքր շահույթի գոյացումը պայմանավորված է ոչ բոլոր հիմնական միջոցների համար մաշվածության հաշվարկմամբ:

Ընկերության կողմից ներկայացված հավատարմագրային կառավարման ծրագրով նախատեսվում է 2014-2018թթ բուժհաստատությունում ներդնել 300.1 մլն դրամ, որից 140.3 մլն դրամը կամ ներդրումների շուրջ 46%-ը կուղղվի նոր

սարքավորումների ձեռքբերմանը, 77.9 մլն դրամը կամ ներդրումների 26%-ը՝ բուժհաստատության վերանորոգմանը, «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի վարկային պարտավորությունների մարում 69.5 մլն դրամ կամ ներդրումների 23%-ը, իսկ մնացած 12.4 մլն դրամը կամ ներդրումների 4%-ը՝ կադրերի վերապատրաստմանը և այլ ծախսերի իրականացմանը:

Ներդրումների իրականացման արդյունքում ակնկալվում է թվով 30 նոր մասնագետների ներգրավվում, ինչպես նաև բուժաշխատողների աշխատավարձի աճ:

Այսպես ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է բուժաշխտողների միջին աշխատավարձի կրկնակի աճ (62.4-123.1):

Այսինքն նշված ներդրումային ծրագրի իրականացման դեպքում հնարավոր կլինի Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ ունենալ ժամանակակից սարքավորումներով հագեցած վերանորոգված և ժամանակակից պահանջներին համապատասխան մանկաբարձագինեկոլոգիական և վիրաբուժական ծառայություններ մատուցող բուժհաստատություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համաձայն ծրագրի Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում 10 տարիների ընթացքում կվճարվի 136.4 մլն դրամ շահութաբաժին, իսկ ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ